Հայտարարվում է մրցույթ՝ <<Երևանի Խ.Աբովյանի անվան հ.84 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ 2022-2023 ուստարվա համար

Հայտարարվում է մրցույթ՝ « Երևանի Խ.Աբովյանի անվան հ.84 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու » /10 ժամ/, «ՀԵՊ» /8 ժամ/, «Ինֆորմատիկա» /13 ժամ/ առարկների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար 3x4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ / դիպլոմ/,
- Անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը / առկայության դեպքում/,
- Ինքնակենսագրություն /Ձև 5/,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- Հրատարակված հոդվածենի ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/ առկայությոն դեպքում/
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ, կամ առկա է թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունվան ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 12.09.2022թ. ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 14.09.2022թ. ժամը 14:00-ին, « Երևանի Խ.Աբովյանի անվան հ.84 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ում՝ Քանաքեռ 14փ. 1 տուն:

Տեղեկատվությունների համար զանգահարել՝ 010-28-35-90, 010-28-35-91